

Ա. Լ. Քենեդի

ԱՆՋՆՋԵԼԻ ԱՐԱՐՔՆԵՐ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



ԳԻՏԱՆՔ
Երևան 2008



The publisher acknowledges subsidy
from the Scottish Arts Council towards
the publication of this volume

A. L. Kennedy
INDELIBLE ACTS
a collection of stories

Քենեդի, Ա. Լ.

ԱՆՁՆՁԵԼԻ ԱՐԱՐՔՆԵՐ. Պատմվածքներ, Եր.: Գիտանք, 2008, 176 էջ.

Գրքին վերնագիր տված պատմվածքում Ջոնի փլատակների մեջ սիրելեաներն իրար են հակադրում իրենց տռփանքը. պանրի խանութում գոյացած հերթը հանգեցնում է ամուսնական անհավատարմության. դիակիզարանում կատարվող հուղարկավորությունը պատմում է մեռած սիրո մասին. արտասահմանում հյուրանոցի սենյակը դառնում է հուսահատության տրամանկար, իսկ հիվանդությունը՝ անբուժելի վշտի փոխաբերություն. անհաշտ ընտանիքի դեռահաս տղան խաղաղություն է փնտրում նոր եկած ծյան մեջ: Հերոսների կյանքը հուզումնալից է, դժվար, հաճախ խորտակված. նրանցից յուրաքանչյուրը յուրովի ձևով հույսի զոհ է: Մտերմիկ և անկեղծ պատմություններ են այնպիսի բաների մասին, որոնք մենք ինքներս հաճախ մեզ չենք խոստովանում, և որոնց մասին բարձրաձայն չենք խոսում:

ISBN 978-99941-822-7-5

© A. L. Kennedy 2002

© Գիտանք, հայերեն թարգմանության համար 2008

ԱՆՁՆՁԵԼԻ ԱՐԱՐՔՆԵՐ

Պա դժվար չէր:

«Ինչ լավիկն է: Շատ սիրունիկը»:

Ով ասես դա կարող էր անել: Բացարձակապես ով ասես:

«Գիշտ այնպիսին, ինչպիսին որ սիրում եմ: Յոյակապ է»:

Նա շփում էր սովորականի պես՝ բթի ու ցուցամատի ծայրերով: «Մմմ: Յիմա աջը»: Վերնաշապկի վրայով շրջանաձև համառ մերսում ու թեթև ավահարումներ, մինչև որ երկու պտուկներն էլ երևան՝ ցցուն ու զգայուն: Ինչպիսին որ պետք է լինեին:

«Սիրունիկ է»: Նրա խոնավացած շուրթերի լարվածությունը թուլացավ, իսկ հետաքրքրությունը թաքնվեց ակնոցի սև լռության հետևում: «Շատ սիրունիկ»: Լորին ժպտալով մի պահ կանգ առավ, երջանիկ, գոհ, որ իմ անձկություններն ի հայտ են եկել համաչափորեն: «Ինչ հաճելի է»:

Սակայն ձեռքեր ունեցող ամեն մարդ կարող է հասնել նույն արդյունքին: Նույնիսկ պարտադիր չէ, որ *ձեռքեր* ունենա: Մեկ *ձեռքն* էլ բավական է, կամ քիչ թե շատ լավ արհեստական ձեռքը, կամ էլ՝ վարժեցված տնային կենդանին: Լորին հրաշք չի գործում, նա վեր է հանում ոչ թե մեռածին, այլ ընդամենը մի փոքրիկ բողբոջ կամ երկու հեշտությամբ գրգռվող հատիկ: Շոշափիր այդ բողբոջները կամ գրգռիր, պարուրիր շնչովդ, համբուրիր, և դրանք, ամուր կոճակների վերածվելով, կցցվեն: Որոշակի սահմաններում, որքան շատ եք ցանկանում գտնել, այնքան գտնելու շատ բան է առաջանում. դրանք այդպիսին են, դուրս ցցվելու բնական հակում ունեն: Կարող են կանգնել սովորական ցրտից և ամիսը մեկ՝ այս որոշակի փաղաքշանքից, ինչն իմ մեջ հարուցում է հենց այն ցանկությունը, որին նա ձգտում էր:

Երթևեկությունը թնդում ու աղմկում էր մեր կողքին, անցնում էին հետիոտներ, որոնց մեջ սովորականից շատ քահանաներ կային, կամ էլ ընդամենը փարաջավոր մարդիկ. ես գիտակ չեմ ու չեմ կարող տարբերել: Ես ցանկանում էի պարզապես Լորինն պառկեցնել մեջքի վրա, ինչ-որ կերպ կապել, հետո մերկացնել մինչև գոտկատեղը և բերանովս դատարկել, մինչև որ ամորձիները պարպվեն ու դառնան խաղողի գիլայի չափ, մինչև որ նա լաց լինի:

Անհնար է դիմադրել այդպիսի մղումներին, քանի որ դրանք բնագրական են: Գրգռվածության որոշակի կետին հասնելուց հետո՝ անկախ այն բանից, թե որ կետին, և թե ով է հասցրել, ես արձագանքումեմ միանգամայն կանխատեսելի կերպով: Ինչպես որ ընծառյունն ու վագրաձին կամ ծովի խեցգետինն ու հյուսկենն թակարդը, ես Բնության սովորական հաշվարկի մասն եմ: Յաճախ փորձում եմ հիշել այդ մասին՝ հեռանկարի անկողմնակալ պատկեր կառուցելու նպատակով:

Արագ և լուռ անցնում են չորս միանձնուհի՝ թեթևակի զարմացած հայացքներ նետելով գլխաշորի տակից: Ուժեղ ցանկությունից շնչահեղձ են լինում, սակայն հասարակության մեջ ընդունված պայմանականություններն ու ներքին կարգապահությունն խանգարում են՝ ինձ փրկելով ձերբակալությունից: Ես ոչինչ չեմ ասում, ոչինչ չեմ անում և, ինչպես որ ակնկալվում էր, լոկ փոթորկվում եմ տռփանքից:

Լորին քնծիծաղում է՝ հասկանալով վիճակս: «Դա քեզ նույնքան է դուր գալիս, ինչքան որ ինձ, չէ՞»:

«Բայց ոչ հիմա»: Օրը հաճելիորեն լցնում է պողոտան, օտար հուշարձանները ձանձրանում են դասական արևի և Լորիի ուսերից վեր խոյացող Կոլիզեոսի հսկայական քանդված օղակի ստվերի ներքո:

«Ինչո՞ւ ոչ հիմա»;

«Որովհետև մարդիկ մեզ են նայում, կտեսնեն»:

«Ուրեմն չպետք է հագնեիր այդ վերնաշապիկը, դա է նայելու պատճառը, և նրանք իհարկե կտեսնեն: Քեզ դո՞ւր չի գալիս, երբ տղամարդիկ նայում են կրծքիդ: Ինձ դուր է գալիս: Քանի որ դու չես կարող նրանց պատկանել: Քանի որ իմն ես»:

Քանի որ իմն ես: Ծեծված բառեր, որոնք կարող է արտաբերել ցանկացած բերան: Կուզենայի դրանք վերադարձնել նրան այնպես, որ *իմ* ձայնը հարվածի *նրա* կրծքին՝ այդ սովորական ակնկալիքի լիցքը պարպելով ստանոքսի և կոկորդի միջև: Կուզենայի քեզ հասկացնել՝

Քանի որ իմն ես, կկանգնեմ վանականներով շրջապատված՝ ինձ զսպելով ու մտածելով միայն քո թլիփի մասին: Քանի որ իմն ես, կմոռանամ զգուշությունս ու կլիներ միաժամանակ կատաղի, զայթակղիչ, երջանիկ, վիրավորված, մահացու և ժամագին: Քանի որ իմն ես, կնայեմ քեզ այնպես, ինչպես որ հիմա, ու կհիշեմ, որ կարող եմ մերկացնել քեզ մինչև արյունդ, մինչև զգացմունքներդ: Ես ճանաչում եմ քեզ առնվազն նույնքան, որքան դու ես ճանաչում ինձ:

Քանի որ իմն ես: Շշմարտությանը չառնչվող ծեծված բառեր:

Այժմ նա շարժվում է արագ, գրեթե վազում պատերի շուրջբոլորը՝ հետաքրքրվելով հիմքով, հենարանների դասավորությամբ և սանդղա-վանդակի աղյուսների շարվածքով: Նա սիրում է կառույցներ ուսումնասիրել, ես չեմ կիսում նրա հետաքրքրությունը: Սակայն հոգ չէ. այդ ընթացքում կարող եմ նստել այստեղ ու նամակ գրել: Կարող եմ դիտել, թե նա ինչպես է շարժվում կիզիչ արևի տակ, նրա ստվերը սեղմվում է՝ տեղավորվելով նրա տակ: Նա իրոք պետք է գլխարկ հագնի, մինչև երեկո արևայրուք կստանա: Լորին կարող է շատ անփույթ լինել այդ հարցում:

Ես ջանում եմ ավելի զգույշ լինել, քանի որ իմ մաշկն ավելի լավն է: Իմ տարիքի և ավելի երիտասարդ կանայք դեմքին ունեն մանր գծիկներ և տեսանելի կնճիռներ, ես չունեմ: Իմ մաշկն առածգական է և առողջ: Երբ միայնակ եմ լինում, երբեմն որսում եմ դեմքիս արտացոլումը հայելու մեջ և իմ գեղեցիկ արտաքինին տեսնում նրա ձեռքերի ուրվականը, որը դեռ մնացել է այն հետկեսօրերից և երեկոներից, երբ նա գնում ու ստուգում էր մաշկիս առածգականությունը: Ես նրան եմ տալիս իմ ամենալավը, ինչը նա գնահատում է և ժամանակ է գտնում ասելու այդ մասին:

Բացի այդ, ես նրան տալիս եմ իմ աջակցությունը, համաձայնությունը, կիրակնօրյա երկար արձակուրդս՝ որոնցից նա օգտվում է հյուրանոցի վարագույրներով ծածկված և հայելապատ սենյակում՝ Յոննի խոնավ, եկեղեցական շոգին: Ժամանելուց հետո անցյալ գիշեր մենք ժամերով մեղք էինք գործում՝ անտեսելով պատվիրանները, հավանաբար այն պատճառով, որ այստեղ մեզ չեն տեսնում նրանք, ում համար դա նշանակություն ունի: Ես կարող եմ, օրինակ, մոտենալ նրան, բռնել ձեռքը, շոյել երակների կապույտ զարկերը և միահյուսել մեր ափերը այնպիսի ծանոթ, սովորական, քնքուշ ու մեղսական ձևով, որ ցանկացած չարամիտ դիտորդ կարող է դա օգտագործել մեր դեմ: Բայց սա ապահով քաղաք է. մենք հեռացել ենք Գրինվիչի միջօրեականից և անանունության ներքո ենք:

Կարող եմ ասել, որ Լորին երջանիկ է այստեղ: Նրա ուսերը կենսուրախություն են արտահայտում, որը ես սովորաբար տեսնում եմ միայն գիշերը: Մթության մեջ նա բացվում է, խաղաղվում, ինձ դուրս է հանում, մայթերով վեր ու վար տանում. այն, ինչ մենք չենք կարող ապահովաբար անել ցերեկը: Կամ էլ ինքնաշարժ է վարում, և ես նախընտրում եմ գնալ նրա հետ, լինել այնտեղ, ուր ինձ տանում է:

«Այստե՞ղ»:

«Ինչո՞ւ չէ»: Այս անգամ մենք դաշտում ենք. շատ առողջ ու մաքուր օդ է: «Այստեղ հանգիստ է, շրջապատում մարդ չկա»: Բայց նա դեռ նայում է լուսամուտից դուրս՝ ստուգելով: Թեև Լորին ինքը սիրում է դիտել, երբեք չի ցանկանում, որ դիտեն իրեն: Վախենում է, որ իրեն անելանելի դրության մեջ կդնեն, կամ կստիպեն անել այն, ինչ ինքը չի ուզում: «Առանց կանգ առնելու, հա՞»:

Նրա երկնակապույտ-կանաչ ոչխարանման աչքերը փայլում են: «Անձրև է գալիս»:

«Ուրեմն կթրջվես»:

Նա քաշում է ձեռքի արգելակի լծակը, անջատում շարժիչը, և մենք նստում ենք ինքնաշարժի մեջ՝ շրջապատված դաշտի մռայլ մթությանը: Աստղ չկա: Մի այլ գիշեր նա կարող էր ընտրել անտառը կամ ինքնաշարժի

ստորգետնյա կայանատեղը: Ես հանում եմ անձրևանոցս, մնում եմ կոշիկ-ներով: Բարձրակրունկ կոշիկն անհարմար է ցորենի հնձած արտում:

«Այո: Բժիշկը հենց այդ էր նշանակել: Բայց թող տեսնեն: Թող որ իսկապես տեսնեն»:

Քանի որ ես ցանկանում էի այդպես անել, կարիք ունեի դա անել, ակնկալում էի դա անել, քանի որ սա այն ընտրությունն է, որ կարող եմ անել, ապա դուրս եմ գալիս ինքնաշարժից, հատում եմ խուզված շարքերը, որպեսզի նրան ցույց տամ մարմինս: Բաց գույնի արևահարված մաշկս փայլատակում է առջևի լապտերների լույսի ներքո՝ առկայծելով անձրևի կաթիլներից, և ապա հանգչում է նրա տակ:

«Դու շատ փչացած, անպիտան աղջիկ ես»:

Ամուր մխրճված նրա և ինքնաշարժի միջև՝ ես զգում եմ մեջքիս նրա ձեռնոցները, տաբատի ճարմանդի նուրբ սառնությունը, նրա լեզուն, մեզ միասնացնող, մեր ընդհանուր հետաքրքրության խոռոչս և այն, թե ինչքան համերաշխ ենք շարժվում: Գլուխս թեքելով՝ կարող եմ տեսնել, թե անձրևի պղպջակներն ինչպես են դողում ու պայթում՝ թույլ շողշողալով ուղիղ աչքերիս դիմաց:

Նա կարող էր և մեկ ուրիշը լինել. «Բարձրացրու հետույքը», - բայց դա Լորին է, որը լարված գործում է՝ հեշտությամբ ժխտելով բոլոր այլ հնարավորությունները:

Ես գոհ եմ նրանից, նրա հագուստի ջերմությունից, այն բանից, որ ինձ ծածկել է իրենով: Մայրս հաճախ էր ինձ զգուշացնում, որ գիշերը և փոթորկալից եղանակին դուրս չգամ առանց վերարկուի: Դա ևս մի պատճառ է՝ թողնել Լորիին, որ գրկի ինձ և, ինչ-որ իմաստով, ինձ տա իր վերարկուն:

«Լավ աղջիկ ես»:

Կանխավայելումը խամրեց՝ անհետանալով ապականված միջավայրի, կենդանու կղանքի և թաց բրդի հոտի մեջ: Մեր շնչառությունները հավասարվեցին, նա սկսեց ու վերջացրեց, ինչպես միշտ, լուռ, ընդհատում շարժման պոռթկումով: Եվ ապա անշարժացավ ու հետ քաշվեց: Նա իրեն սովորեցրել էր լիովին անհաղորդ լինել:

Ահա թե ինչու եմ վարժվել հասկանալ նրա մարմնի ու վարքի լեզուն: Կարող եմ ասել, որ այս հետկեսօրին նա բավարարված է. մազերը հաճախ հետ չի գցում, չի շփում ականջի բլթակները, և ինչ-որ հեղհեղուկ բան կա նրա քայլվածքում՝ մկանների խաղ, ախորժակն էլ թեթևակի փոխվել է:

Նրա հագուստը հարմարավետ է, բայց անհրապույր չէ: Ես նրան տեսել էի մոտ յոթ ժամ առաջ, երբ դեռ տաք էր ու նոր արթնացած, երբ գնում-գալիս էր մահճակալի և զգեստապահարանի միջև, այնպես մերկ, որ ներսումս ամեն ինչ տակնուվրա էր լինում, իսկ ափերս ջրածգվում էին: Այդ զգացումներն

ինձ բնորոշ են, դրանց լարերն անցնում են իմ ամբողջ մարմնով: Ես փորձել եմ մեկուսիչ կամ ապահովիչ գտնել, սակայն ամեն անգամ նա վերամիացնում է անջատիչը՝ կարծես ապացուցելով, որ ես ի վիճակի չեմ վերջ տալ դրանց, և որևէ այլ բան լիարժեք չի լինի:

Օրինակ՝ այսօր նրա հագուստը պետք է ցուցադրի իր երջանկությունը և հաճելիորեն զարմացնի ինձ՝ սպիտակ վարտիք (իմ գնածը) և հին քինսե տաբատ, քանի որ երկուսս էլ գիտենք, որ դրանք սազում են իրեն: Ավելացրեք պարզ սև կարճաթև վերնաշապիկը՝ շահեկանորեն ընդգծված վուշե բաճկոնով, *Ռեյ Բան* ակնոցը, որը կփրկի աչքերը կկոցելու անհրաժեշտությունից, և ահա նա՝ իմ Լորին, լիովին հանդերձավորված:

Երբ տուն վերադառնանք, նա ինձ մոտ կթողնի իր հագուստը, զանազան պարագաներն ու իրերը և իր բուրմունքի ու մարմնի աննշան հետքերը: Ամենախոսուները կաշին է. նրա գոտիները կլոր են այնտեղ, որտեղ ընդունել են գոտկատեղի ձևը, և քառթված՝ ցույց տալով իրանի չափսը, նրա կոշիկներն ու ձեռնոցները ձևափոխվում են ըստ նրա շարժումների և քրտինքի: Եվ, իհարկե, ես նույնպես: Նրա բացակայության ժամանակ նրա նախկին կարիքները երևում են ինձ վրա: Նա իմ մեջ է ներարկել իր բոլոր սովորությունների պատկերը: Ջարմանակի չէ, որ գիշերը նրա մասին հիշելը ինձ անքնության է մատնում:

Ես դեռ չեմ փորձել քնել Զոռնում: Դա անհրաժեշտ չի թվում: Երբեմն վրա է հասնում հոգնածությունը՝ մշուշելով իրականությունը, բայց ես տեղի չեմ տալիս: Պատրաստ եմ լինել ավելի քան արթուն, որովհետև Լորին այստեղ ամբողջությամբ ինձ հետ է. հենվել է բազրիքին, բարետես ու շարժուն՝ իմ հանրագիտարանը: Մինչև որ գնանք, մինչև որ ամեն բան վերջացած լինի, ես անգիր կանեմ նրա ձեռքերը՝ կարճ եղունգներից մինչև հետզհետե գունատվող հողերը, մազերի նուրբ թավիչը: Ցանկացած մարդ կարող է կենտրոնանալ և առույգ մնալ չորս օր ու երեք գիշեր, երբ իր հետ է այն մարմինը, որն անընդհատ կարոտում է: Ես միշտ անկուշտ եմ այն բանից, ինչի պակասը, ինչպես գիտեմ, զգալու եմ:

Այդ չափավորումն ու սպասումը անշուշտ ուժեղացնում են երկուսիս զգացումքների լարվածությունը:

«Ասա, ուր նշան բռնեմ»:

Անհարմարության զգացում, որը կուտակվել էր առայժմ չիրագործված ցանկության պատճառով:

«Թե չէ պարզապես կդնեմ այնտեղ, որտեղ ուզեմ»:

Զոռնում ես միայն նրան եմ տեսնում՝ նրա երևակայության պոռթկումները, ամենօրյա հազն ու շշուկը, պահված շունչը, երբ նա ընթերցում է, այն, թե ինչպես է մազերը չորացնում սրբիչով: Նրա յուրաքանչյուր մասն այնքան

ծգող է, որ, կարծում եմ, դժվար է նրան լքել կամ դիմադրել նրա ցանկություններին:

«Ես նշան կբռնեմ, ուր ուզեմ: Եվ դու գիտես, որտեղ եմ ուզում...»:

Ես ավելի սովոր եմ կարճ գիշերներին, երբ մենք փորձում ենք ցնցել միմյանց: Այն գիշերներին, երբ ես ցանկանում եմ, որ ինչ-որ բան մնա ինձ հետ, իսկ նա չի ուզում՝ նշաններ, հետքեր հիշողությանս մեջ, անջնջելի արարքներ: Անցյալում ես սաստիկ ցանկանում էի փորձեր կատարել տարբեր բաների միջոցով՝ նստելով, կանգնելով, ծալվելով և պառկելով իմ լոգարանում:

«Ահա թե ես *ուր եմ* ուզում: Հենց այստեղ: Եվ այստեղ»:

«Լորի...»: Դրա հոտը տհաճ չէ, թեթևակի դառն է, յուղոտ, տաք: «Լորի, կարո՞ղ ես...»:

«Ի՞նչ»:

«Դե, դա... տարփալի չէ»:

Նա կանգնած է՝ տաբատի ճարմանդը բաց: «Ես *միզում եմ քեզ վրա*, ինչպե՞ս կարող է դա տարփալի չլինել»: Ազատ ձեռքով նա տրորում է իր ճակատի խոպոպը:

«Մեծ մասամբ դա ընդամենը զոլ է. կարող է միայն հանգստացնել: Կներես»:

«Տարփալի չէ»: Շիթը դանդաղում է, շաղ է գալիս, դադարում: «Բոլորովի՞ն»:

«Կներես»:

Նա նստում է լոգարանի եզրին մեջքով դեպի ինձ, հենվում է իր ծնկներին և առաջ թեքվում: «Դե լավ, ներողություն մի՛ խնդրիր»:

«Կարևորը փորձելն էր»:

«Հա»: Նա նայում է ձեռքի ժամացույցին: «Այժմ ես իրոք այլ բանի ժամանակ չունեմ»:

Ես ատում եմ Լորիի ժամացույցը: Դիմակայում լինելով բազմապիսի անբնական հարվածների և սարսափելի խորությունների ճնշման ու ջրի նկատմամբ՝ այն անկասկած ավելի երկար կյանք կունենա, քան մենք: Այն անխափան չափում է մեզ հետ մեր ժամանակը, դա Լորիի խիղճն է և իմ սահմանը: Ես կուզեմայի, որ նա համաձայներ այն թողնել մեր սենյակում: Չեմ ուզում, որ ինձ հիշեցնեն, թե երբ պետք է դադարենք: Չեմ ուզում տխրել և ասել նրան, թե ինչու:

Ես ուզում եմ առանց շեղվելու անընդհատ հավաքել և ամբողջական դարձնել նրան վերաբերող ամեն բան: Տուն գնալուց հետո նա կներծծվի իմ հիշողության մեջ, իմ արյունից նրա հոտը կգա, ես կմտածեմ նրա ձայնով և կկարողանամ մնալ միայնակ, մնալ *այլ* մարդկանց հետ՝ հեշտությամբ

մտապահելով նրանից այն ամենը, ինչի կարիքը ես ունեմ:

Հուսով եմ, որ ի վերջո սա կարող է իրականանալ. Լորին կարող է դառնալ մի ուրիշ մարդ՝ հետևյալը, մի նոր մարդ:

Նա ձգում է պարանոցը: Դա պետք չէ անել. մաշկը, որ մազերի և օձիքի միջև է, մերկանում է արևի տակ: Այնտեղ նա փափուկ է, քաղցր՝ համբույրի համար, և այդ շարժումը *բնորոշ չէ* իրեն. անկրկնելի է, անփոխարինելի, դժվար է նորից հանդիպել: Նա անկրկնելի, անփոխարինելի, աններելի մարդ է, առանց որի ես պետք է տարիներ ապրեի՝ լուռումուռը կառչելով այն փշրանքներից, որ նրա ընտանեկան հանգամանքները թույլ են տալիս պարզապես ինձ: Սա ամենալավն է, ինչ նա կարող է ինձ տալ, սա այն է, ինչը մեզ պետք է թույլ չտա ծիծաղելի լինել:

Սա պետք է բացառեր այն երեկոները, որտեղ կային սառցե բազում խորանարդիկներ, սափրիչ, միրգ և մեր հարաբերություններին վերաբերող այլ բաներ, որոնք սաստկացնում են զգացումները՝ ատամի մածուկի փոքր խայթ, մի քիչ սեռազգայական մածուկ:

«Փչացած աղջիկ»:

«Չէ: Փչացածը դու ես: Փչացած ծերուկ»:

Նա լոկ քմծիծաղում է՝ ինձ ազատելով, ցույց տալով, որ չի վիրավորվում: «Չէ, դու ես փչացածը, ու հիմա կապացուցես դա: Գնա և բեր այն բանը, ես ուզում եմ տեսնել: Ցույց տուր, թե ինչ փչացած աղջիկ ես, երբ խաղում ես իմ բացակայության ժամանակ...»:

«Գործընկերներս են նվիրել»:

«Բայց դու ես օգտագործում »:

«Հա, իհարկե»:

Ես դա տուփով տալիս եմ իրեն, որպեսզի նա ինքը հանի այնտեղից:

«Գրողը տանի»:

Իմ գործիքն ավելի երկար է ու հաստ, հաստատ ավելի մեծ է, քան նրանը:

Դա չպետք է որ նշանակություն ունենա նրա համար: Առնվազն մի քանի մատնաչափը լոկ բռնելու համար է, դրանք պարտադիր չեն, չեն սահմանում անհրաժեշտ չափը:

Նա շուռումուռ է տալիս գործիքը ձեռքերի մեջ՝ ասես դա դավաճանության մարմնավորում լինի:

«Գրողը տանի»:

Սակայն, ինչպես կարծում եմ, նա երբևիցե չի համարել, որ չի օգտագործելու դա:

«Դե լավ: Համաձայն եմ»: Նրա աչքերի խորքը սառն է՝ արտացոլելով իմ մաշկը: «Քեզ միշտ հիշելու բաներ են պետք... Լավ, դեմ չեմ»:

Եվ ես կատարյալ հստակությամբ հիշում եմ այն պահը, երբ նրա այնտեղ

լինելն ավելի մեծ ցավ պատճառեց, քան այն, երբ պարտադրված ինձ թողեց մենակ:

Մենք՝ Լորին և ես, երբեք չենք քննարկել այն գիշերը. դա մեր մյուս գաղտնիքն է: Մենք չենք խոստովանում:

Բայց ես հետզհետե հասկանում եմ, որ գրառում եմ այն, ինչ կատարվել է և ինչ կատարվում է, նամակներում, որոնք երբեք չեն ուղարկում՝ նրա անծանոթ կնոջը գրված նամակներում: Թեև կարծում եմ, որ մենք պետք է որ մի քանի ընդհանուր բան ունենանք: Երկուսս էլ պետք է նայենք արևի լույսի տակ քայլող Լորին և գեղեցիկ համարենք նրան: